ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ՝ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑՉԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԳՈՒՄԱՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱ-09.06.01.86-ՊՄ

ք. Երևան «21» «դեկտեմբեր» 2021թ

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Վ. Գասպարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու) մի կողմից, և «Գորիսի Ա. Բակունցի անվան N 1 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրեն Լ. Մանուչարյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող) մյուս կողմից, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի N 1667-Ն որոշումը կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պատվիրատուն պարտավորվում է ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի 09.06.01.«86. Հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների հերթական ատեստավորման ենթակա ուսուցչի վերապատրաստում» միջոցառման իրականացման համար սույն պայմանագրի 2.1. կետում նշված միջոցները հատկացնել Կատարողին, իսկ Կատարողը ստանձնում է պարտավորություն 2021 թվականի ընթացքում հերթական ատեստավորման ենթակա թվով 12 ուսուցչի վերապատրաստման ծառայության (այսուհետև՝ Ծառայություն) մատուցման դիմաց կատարել վճարում:

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

2.1. Սույն պայմանագրով կատարված Ծառայության ընդհանուր գինը կազմում է 249600 (Երկու հարյուր քառասունինը հազար վեց հարյուր) ՀՀ դրամ:

2.2 Պատվիրատուն կատարում է անկանխիկ վճարում՝ դրամական միջոցները Կատարողի գանձապետական հաշվին փոխանցելու միջոցով:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1.Պատվիրատուն ցանկացած ժամանակ իրավունք ունի ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող աշխատանքի ընթացքը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.2. Պատվիրատուն ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

3.4. Կատարողը պետք է ապահովի սույն պայմանագրի 1.1 կետում նախատեսված նպատակների իրականացումը:

3.5. Սույն պայմանագրի 2.1 կետում նշված միջոցները պետք է ծախսվեն բացառապես սույն պայմանագրի 1.1 կետում նշված նպատակներին համապատասխան:

3.6. Կատարողի կողմից ստացված և սահմանված ժամկետներում չօգտագործված միջոցները վերադարձվում է Պատվիրատուին:

3.7. Կատարողը պետք է հաշվապահական փաստաթղթերը վարի օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.8 Կատարողը պարտավոր է յուրաքանչյուր եռամսյակ ներկայացնել հաշվետվություններ համաձայն գործող օրենսդրության:

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1. Սույն պայմանագրով և միջոցառմամբ նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում կազմակերպությունը պարտավորվում է պետական մարմնին փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Պատվիրատուն սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

5.ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5.1. Սույն պայմանագրը ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը:

5.2 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի համաձայնությամբ, որը կնքվում է գրավոր:

5.3 Սույն պայմանագիրը կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

6 ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ ա տ վ ի ր ա տ ու	**Կ ա տ ա ր ո ղ**
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Գորիսի Ա. Բակունցի անվան N 1 ավագ դպրոց» ՊՈԱԿ
ք. Երևան, Կառավարական 2 շենք	ք.Գորիս,Անկախության 64
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011038339	Հ/Հ 900288000160
ՀՎՀՀ 02698833	ՀՎՀՀ 09204921
Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող	Տնօրեն
_____ Վ.Գասպարյան (ստորագրություն) Կ.Տ	_____ Լ. Մանուչարյան (ստորագրություն) Կ.Տ